ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 205 – Ա **04 հոկտեմբերի 2017 թ.**

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ N 5 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30 -Ի N 30 ՀՐԱՄԱՆԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.5-րդ կետի <<ժա>> ենթակետի, 1.6 կետի դրույթներով

որոշում եմ՝

1.ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի, 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 2-րդ և 3-րդ մասերի, 115-րդ հոդվածի 3-5-րդ մասերի, 129-130-րդ հոդվածների, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի, 37-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերության և 6-7-րդ մասերի, 38-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 3-րդ մասի, 40-րդ հոդվածի 3-րդ մասի, 41-րդ հոդվածի 4-6-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման պատճառով անվավեր ճանաչել <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի N5 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2017 թվականիօգոստոսի 30-ի N 30 հրամանը:

2.<<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի N5 միջնակարգ դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Սահակյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունել սույն որոշումից բխող իրավական ակտ և արդյունքների մասին ներկայացնել տեղեկատվություն:

3.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿԱՐԵՆ ԲՈՐՈՅԱՆ